**From:** Press [mailto:press@minagro.am]
**Sent:** 16 апреля 2018 г. 9:27
**To:** Agro
**Subject:** FW: Hasararakan khorhrdi andam

**From:** Sergey Meloyan [mailto:meloyan@yahoo.com]
**Sent:** Saturday, April 14, 2018 12:23 PM
**To:** press@minagro.am
**Subject:** Hasararakan khorhrdi andam

Հարգելի գործընկեր,

Կից ուղարկում եմ ՀՀ Գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի անդամագրման համար պահանջվող փաստաթղթերը.

1. Դիմում խորհրդի նախագահի անունով
2. Անձնագրի պատճեն
3. Տեղեկանք գործունեության վերաբերյալ
4. Հետաքրքրվածության նամակ:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով, Սերգեյ Մելոյան

ՀՀ Գյուղատնտեսության Նախարարության
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
«16» 04 2018 թ.
Մտից No Ա/5494-18

*/ֆիզիկական անձի համար/*

**ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից**
**հասարակական խորհրդի նախագահ**
**պարոն Իգնատի Առաքելյանին**

Սերգեյ Մելոյանից
*(դիմողի անուն, ազգանուն)*

Ք. Երևան, Սունդուկյան փ. տ. 52, հեռ: 093003860, էլ փոստ: meloyan@yahoo.com
*(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)*

## ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Առաքելյան,

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Ամփոփ տեղեկանք վերջին 2 տարում ծավալած գործունեության մասին (ինքնակենսագրություն 4 էջ),
2. Հետաքրքրվածության նամակ (1 էջ),
3. Անձնագրի պատճենը:

Դիմող՝ Սերգեյ Մելոյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

<14> ապրիլի 2018 թ.



# ՍԵՐԳԵՅ ՄԵԼՈՅԱՆ

Հասցեն. Սուվորովի փ. Տուն 52, Երևան 0008, Հայաստան
Հեռախոս. (374 93) 003860 (բջջ.), (374 10) 43-33-23 (տ.)
Էլեկտրոնային հասցեն. meloyan@yahoo.com

**ՈՒնեմ դասավանդման, կազմակերպության ու միջազգային ծրագրերի կառավարման որակավորում և փորձ:**
Վերջին քսան տարիներին միջազգային օգնության ծրագրերի և հանրապետության ագրարային քաղաքականության ուղեցույցների ու զարգացման գերակայությունների հիման վրա իմ մասնակցությունն եմ ունեցել գյուղատնտեսության և ագրոբիզնեսի ոլորտում գիտության, խորհրդատվության, կրթության բարելավմանն ուղղված և զարգացման ծրագրերի իրականացմանն ու արդյունավետ ռազմավարությունների մշակմանը:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁԸ.

**2012թ.-առ այսօր. Հայաստանի Ազգային Ագրարային համալսարան, ԱՊՀ Էկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, կես դրույք:**

**2016թ.-2016թ. ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ, ԱՏՀ տնտեսական պլանավորման փորձագետ/ Ծրագրի համակարգող:**

**2012թ.-2016թ.Հեյֆեր Փրոջեքթ Ինտերնեյշնլ, ՀԳՌԿՄ** (Համայնքների Գյուղատնտեսական Ռեսուրսների Կառավարման և Մրցունակության) **Ծրագրի Համակարգող:**

2010թ.-2012թ. ՀՄՀ-Հայաստան, «Ջրից դեպի շուկա» ծրագրի ղեկավար:

2006-2010թթ. ՀՄՀ Հայաստան, »Ջրից դեպի շուկա« ծրագրի գլխավոր մասնագետ:

2005-2006 թթ: «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամ, Գյուղի զարգացման ծրագրերի գլխավոր մասնագետ:

2000-2005թթ: ԱՄՆ Գյուղդեպարտամենտի Մարքեթինգի աջակցության ծրագիր (ՄԱԾ), Ակադեմիական աշխատանքների համակարգող:

1998-2000թթ. Կիրառական հետազոտությունների և ագրոբիզնեսի հիմնադրամ (ԿՀԱՀ), Փոխտնօրեն:

1996-1998թթ. Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ:

1995թ.-առ այսօր. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ԱԱՀ Էկոնոմիկայի ամբիոնի դոցենտ:

1986-1995թթ. Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Ագրոարդյունաբերական համակարգի (ԱԱՀ) էկոնոմիկայի ամբիոն, դասախոս:

**1982-1983թթ. ՀՀ Գյուղատնտեսության նախարարության »Հայգլխանասնարդ« վարչությունում ավագ տնտեսագետ:**

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ.

**1988թ.** Տնտեսագիտության թեկնածու: Ատենախոսության թեման՝ «Արտադրական ֆոնդերի օգտագործման տնտեսական արդյունավետության բարձրացումը Հայաստանի նախալեռնային գոտու պետական տնտեսություններում»:

**1983-1986թթ.** Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի (ՀԳԻ) Գյուղատնտեսության էկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ:

**1977-1982թթ.** ՀԳԻ տնտեսագիտական ֆակուլտետի ուսանող, գերազանցության դիպլոմ, որակավորումը՝ Գյուղատնտեսական արտադրության տնտեսագետ-կազմակերպիչ:

**1967-1977թթ.** Երևանի #120 միջնակարգ դպրոցի աշակերտ:

## ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Հատկանշական ծրագրեր.**

**2016:** Իրականացրել է խորհրդատվական ծառայություն հետևյալ բովցանդակությամբ. «ԱՏՀ-ի կիրառումը Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական պլանավորման գործընթացում»: Ֆինանսավորվել է ԵԱՀԿ Երևանի գրասենյակի կողմից:

**2011թ.** Իրականացրել է խորհրդատվական ծառայություն հետևյալ բովանդակությամբ. «Դանիական ծրագրով իրականացվող մասնավոր սեկտորին աջակցության գնահատում»: Ֆինանսավորվել է Օրբիկոնի կողմից, Դանիա:

**2010թ.** Իրականացրել է տեղական խորհրդատուի ծառայություն գյուղի զարգացման հարցերով հետևյալ ծրագրի շրջանակներում. «Համագործակցություն համայնքների զարգացումն ապահովելու համար»: Ֆինանսավորվել է Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի (ՄԱԶԾ) կողմից:

**2001 – 2006թթ.** Համակարգել է ԱՄՆ Գյուղդեպարտամենտի 124 խորքային հորերի ու ջրագծերի կառուցման և վերանորոգման ծրագրերը:

**2000թ.** Իրականացրել է «Գեղարքունիքի մարզի համայնքներում 2000թ. երաշտի հետևանքով առաջացած վնասների գնահատում» ծրագիրը: Ֆինանսավորվել է Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի (ՄԱԶԾ) կողմից:

**1999-2000թթ.** Մասնակցել է «Գյուղացիական միությունների (կոոպերատիվների, ասոցիացիաների և այլն) կազմակերպման հիմնադրույթների մշակումը և դրանց ներդրումը Արարատի ու Արմավիրի մարզերում» ծրագրի իրականացմանը: Ֆինանսավորվել է Համաշխարհային Բանկի (ՀԲ) կողմից:

**1999թ.** Զեկուցումներ «Ինչպես կազմել բիզնես պլանը» թեմայով Հանրապետության բոլոր 10 մարզերում և Արցախում:

**ՈՒսուցում/համաժողովներ.**

**2011թ.** Գյուղատնտեսության ոռոգմանը վերաբերող ուսուցողական այց Պորտուգալիա և Իսպանիա: Տևողությունը 1.5 շաբաթ:

**2002թ.** Առաջնորդության, խորհրդատվական ծառայության և հիմնադրամների զարգացման վերաբերյալ ուսուցում ԱՄՆ համալսարաններում: Ֆինանսավորել է Վաշինգտոնի ԱՄՆ Գյուղդեպարտամենտը: Տևողությունը 5 շաբաթ:

**2001թ.** Կրթության և ագրոբիզնեսի ոլորտներում փորձի փոխանակում և ուսուցում Նիդեռլանդներում և Գերմանիայում: Ֆինանսավորել է «ՏԵՄՊՈՒՍ» ծրագիրը և ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ը: Տևողությունը 3 շաբաթ:

**2000թ.** Մասնակցություն «Գյուղատնտեսական սպասարկման կոոպերատիվների դերը անցումային էկոնոմիկայում» թեմայով միջազգային համաժողովին: Մոսկվա, Ռուսաստան:

**1997թ.** Մասնակցություն Գյուղատնտեսական տնտեսագետների XXIII միջազգային համաժողովին: Սակրամենտո, Կալիֆորնիայի նահանգ, ԱՄՆ:

**1997թ.** Ագրոբիզնեսի և կրթական ոլորտներում ուսուցում: Ֆրեզնոյի համալսարան, Կալիֆորնիայի նահանգ, ԱՄՆ: Տևողությունը 2 շաբաթ:

**1996-1997թթ.** Կոոպերատիվների զարգացման ուսուցողական կուրս: Բեռլինի Գյուղատնտեսական ինստիտուտ, Գերմանիա: Ֆինանսավորել է «ԴԱԱԴ»-ն: Տևողությունը 2 ամիս:

**1996թ.** Ագրոբիզնեսի և կրթական ոլորտներում ուսուցողական կուրս Քրանֆիլդի համալսարանում, ՄԹ: Տևողությունը 2 շաբաթ:

**1996թ.** Փորձի փոխանակում և ուսուցում Տեխասի A&M համալսարանի Գյուղատնտեսության էկոնոմիկայի ֆակուլտետում: Տեխասի նահանգ, ԱՄՆ: Տևողությունը 3 ամիս:

**1995թ.** Ագրոբիզնեսի և կրթական ոլորտներում ուսուցողական կուրս Քրանֆիլդի համալսարանում, ՄԹ: Տևողությունը 2 շաբաթ:

**ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ:**
Գիտահետազոտական աշխատանքների իրականացում Հայաստանի ազգային ագրարային համալսարանում՝ սկզբում որպես ասպիրանտ, իսկ հետո որպես աշխատակից: Մասնակցություն համալսարանական, ինչպես նաև միջազգային համաժողովների Հայաստանում, նախկին Խորհրդային Միության և Զարգացած երկրներում (Երևան, Դուբլիանի, Ալմա-Աթա, Մինսկ, Բեռլին, Սակրամենտո, Մոսկվա ), գիտական հոդվածների և զեկուցումների ներկայացում:

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄՆԵՐ.** Երեսունչորս գիտական հոդվածներ և տասնչորս մեթոդական աշխատանքներ:

**2010թ.** «ՀՀ Գյուղատնտեսության ոլորտում կոոպերացիայի զարգացման հիմնախնդիրները» ժողովածուի համահեղինակ: 114 էջ: ՀՊԱՀ:

**1998թ.** «Գյուղատնտեսական ձեռնարկությունների տնտեսագիտական ուղեցույց» գրքի համահեղինակ: 96 էջ: Ֆինանսավորել են ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ը և »ԷյՍիԴիԱյ/ՎՕԿԱ«-ն:

**1998թ.** Հրատարակվել է հոդված Գերմանիայում. «Հողի սեփականաշնորհումը և շուկայական տնտեսության ձևավորումը Հայաստանում»:

**1996թ.** Հրատարակվել է հոդված ՄԹ-ում. «Հողի սեփականաշնորհումը և դրա հետ կապված հիմնախնդիրները»:

**1996թ.** Հրատարակվել է հոդված ԱՄՆ-ում. «Գյուղատնտեսական գործունեությունն ու ենթակառուցվածքները Հայաստանում»:

**ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.** Աշխատանքների նվիրվածությամբ կատարման համար պարգևատրություններ ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ի, Հայաստանում ԱՄՆ դեսպանատան և ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից:

**ԱՅԼ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Համակարգչային գիտելիքներ.** «Միկրոսոֆթ օֆիս» (Վորդ, էքսել), Ինտերնետ և էլեկտրոնային կապերի օգտագործում:

**Լեզուներ.** Անգլերեն և ռուսերեն՝ լավ, հայերեն՝ մայրենի լեզու:

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.**

- «Գյուղատնտեսական տեղեկագիր» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ 2005թ.-ից առ այսօր
- «Ագրոպարենային համակարգի երիտասարդ գիտնականներ» միության անդամ, 2002-2006թթ.
- ՀԳԱ տնտեսագիտական ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ, 1996-1998թթ.
- Գյուղատնտեսության տնտեսագետների միջազգային ասոցիացիայի անդամ, 1996-1998թթ.

**ԱՆՁՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.** Ազգությունը՝ հայ, ծննդավայրը՝ Երևան:
Ամուսնացած եմ, ունեմ 2 երեխաներ:

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂՆԵՐ.** կներկայացվեն ըստ պահանջի:

# ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿ

**ՀՀ Գյուղատնտեսության նախարարին կից**
**հասարարական խորհրդին անդամագրվելու հանձնաժողովին**

**14 ապրիլի, 2018թ.**

Հանձնաժողովի հարգարժան անդամներ,

Հավատացած եմ, որ առկա փորձս և կարողություններս ինձ նպատակահարմար թեկնածու են դարձնում դիմելու 2018թ. ապրիլին հայտարարված **ՀՀ Գյուղատնտեսության նախարարին կից հասարարական խորհրդի անդամ** ընտրվելու համար:

Աշխատելով Հայաստանի ազգային ագրարային համալսարանում, միաժամանակ 1996-ից 2000թթ-ին սերտ անձնական ու մասնագիտական փոխհարաբերություններ եմ ունեցել ԱՄՆ Գյուղդեպարտամենտի հետ և իրականացրել տարբեր ծրագրեր: 2000-2005թթ. որպես ԱՄՆ Գյուղդեպարտամենտի մարքեթինգի աջակցության ծրագրի կառավարման աշխատակազմի անդամ աշխատել ու բախտ եմ ունեցել իմ մասնակցությունն ունենալու գյուղատնտեսության կրթական, խորհրդատվական, հետազոտական, գյուղատնտեսական արտադրության, ոռոգման, շուկայահանման և ագրոբիզնեսի արտադրության ծրագրերի հաջող իրականացման գործում: 2005-2006թթ. շարունակել եմ ծրագրային նույն գործունեությունը Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (ԱԳԶԿ) հիմնադրամում: 2006-2012թթ. աշխատել եմ ՀՄՀ-Հայաստան ԶԴԾ ծրագրում սկզբում որպես գլխավոր մասնագետ, իսկ վերջին 2 տարիներին որպես ծրագրի ղեկավար, որն ուղղված էր գյուղի ու գյուղատնտեսության զարգացմանը՝ ներառելով արժեշղթայի բոլոր օղակները: 2012-2016թթ. աշխատել եմ Հեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ ամերիկյան կազմակերպության հայաստանյան գրասենյակում՝ որպես ՀԳՌԿՄ ծրագրի համակարգող, որի ժամանակ աջակցություն է ցուցաբերվել հանրապետության լեռնային համայնքներում տեղակայված 90 համայնքների արտոօգտագործողների սպառողական կոոպերատիվների կայացմանն ու զարգացմանը: 2016թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, որպես ծրագրի համակարգող և ԱՏՀ տնտեսական պլանավորման փորձագետ, խորհրդատվական ծառայություններ եմ մատուցել ԵԱՀԿ Երևանյան գրասենյակին, իրականացնելով ,Սյունիքի մարզում սոցիալ-տնտեսական զարգացման պլանավորման կարիքների հիման վրա աշխարհագրական տեղեկատվական համակարգերի ներդրում փորձնական ծրագիրը: Ներկայումս, որպես ԱՊՀ Էկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, շարունակում եմ 0,5 դրույքով դասավանդել Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանում:

Դիմելով ՀՀ Գյուղատնտեսության նախարարին կից հասարարական խորհրդին անդամագրվելուն, ցանկանում եմ նորովի շարունակել ներդնել իմ կարողությունները, գիտելիքներն ու փորձը ՀՀ գյուղատնտեսական ծրագրերի իրականացման հաջողության համար:

Նամակին կցվում է նաև իմ ինքնակենսագրությունը, որտեղ ամփոփ ներկայացված են որակավորումն ու աշխատանքային փորձը:

Կանխավ հայտնում եմ իմ շնորհակալությունը:

Հարգանքներով՝
Սերգեյ Մելոյան